

չենք, մինչև այժմ էլ «պատրոն» նշանակում է սկեսրայր հարսի համար. Ումեկի մի ուրիշ որդու՝ ձորի արձանագրութիւնից էլ Դեակայ վանքում կը տեսնենք, որ Ումեկի հօր անունը, յիշատի, ձոր էր: Մի «պատրոն ձոր» ՈՒՄԱ = 1202 թուին մի խաչ է կանգնել ձահուկի Ապարանի կոչուած քաղաքատեղում, հաւանօրէն, նոյն Ումեկի նոյնանուն հօր հետ (*): Այս արձանագրութիւնից պարզ է նոյնպէս որ 1268 թուին Ումեկ արդէն մեռած էր, և ուրեմն կողմնակի կերպով ունինք նորա թիֆլիսում շինած եկեղեցու terminus post quem-ը, որ ըստ պրոֆ. Յովսէփ Օրբելու 1251 թուին պիտի նշանակուի շինութիւնը արաբական արձանագրութեան մնացորդի հիման վերայ (**):

Իսկ թէ Մամախաթունը Ումեկի կինն էր, Զալալ Սաչենեցու աղջիկը և Վախտանգի մայրը՝ պարզուած է նոյն վանքի մի երկրորդ արձանագրութիւնից. «ՁԼԵ» թրւականին «նուսատ աղախին Քրիստոսի Մամախաթուն զուտար ինքնակալ իշխանաց իշխանին Զալալ Դաւալայ Հասանին տեսուն Սաչենո և բարեպաշտ մար իմոյ Մամքանին և ամուսին մեծ պարոնին Ումեկին» մեծ յուսով ուխտ է գալիս Դանձասարի վանքը իւր Վախտանգ որդու հետ և միաբանները խոստանում են Վարդապետի տօնի պատարագը հօրն ու մօրը՝ քանի ինքը կենդանի է, մահուանից յետոյ՝ իրեն (***):

Ինչո՞վ նշանաւոր հանդիսացաւ կհանքի մէջ «զուարթամիտ» և գրասէր Վախտանգը, ոչինչ յայտնի չէ. գիտենք միայն, որ նա վախճանուած է 1244 թուին և թաղուած Վայոց Ձորի եղեգիս աւանում, որ Օրբելեանների իշխանութեան կեդրոններից մէկն էր, փոխանակ իւր հօր շինած եկեղեցու հովանու տակ կամ Դեակայ վանքում, որ իւր եղբոր ձորի գերեզմանատունն էր: Եղեգիսում թաղուելու հանգամանքն անյայտ է, բայց, զուցէ, կարելի

է բացատրել նորանով, որ ազդակցական կապեր ունէր Օրբելեանները հետ. Վախտանգի մօրաքոյրը Մինախաթուն՝ Տաւաշի՝ Օրբելեանի երկրորդ կինն էր, Ստեփանոս Օրբելեանի խորթ մայրը (*): Նորա գերեզմանի արձանագրին է.

+ ԹՎԻՆ ԶԴԴ. Այս է հանգիստ պարոն Վաղրամիկին որդոյ պարոն Ումեկին (**):

Վախտանգի անունն հետ կապուած մեզ յայտնի թուականների հիման վերայ կարող ենք, գրեթէ, ճշգրտութեամբ, որոշել և նորա կեանքի տեղոգութիւնը. հօր մահը տեսանք, մօտաւորապէս, 1268 թուին. Վախտանգը պիտի ծնուած լինի այդ թրւականից առաջ, բայց ոչ շատ առաջ. նորա աւետարանը գրուած է 1279 թուին «ի խրատ և ի վարժումն մանկական տիոց իւրոց». առաքելական թղթերն էլ հաւանօրէն 1280 թուականին, որին ապացոյց նորա պատանեկան մոտրանկարը, մօտաւորապէս 15 տարեկան: Ձորս տարի յետոյ ևս երգնկացին նորան անուանում է «զրւարթամիտ» պատանի, ուրեմն ևս ոչ մեծ քան 18-9 տարեկան մեր հաշուով: Այս տուեալներով նորա ծնունդը պիտի նշանակուի 1265-1268 թ. թ., որով և մեռած պիտի համարուի 76-80 տարեկան հասակում:

ԳՍՐԵԳՐԻՆ ԱՐՔԵՂՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Շարունակելի

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍԳ

Հանոյքը կրկնայ ցնորհներու վրայ հաստատուի, բայց եղանակաբար կը հանգչի ճշմարտեան վրայ:

*

Ամեն ճշմարտեքիս յարմար չէ ըսնու, ասկայն միշտ լաւ է ըսնու համար:

(*) Ալիշան, Սիսական, 370. «թվ. Ում. կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն պատրոն ձորին. յիշեա Քրիստոս Աստուած և ողորմեա»:

(**) X. B. 1918. 198-199. Fragment krestnawo kamnia s arabskoi nadpisj w Tiplise:

(***) Զալալեան. Ա. 186-7:

(*) X. B. 1913. 216. մեր յօդուածը Potomstwo Tars'aica:

(**) Ալիշ. Սիսակ, 149: